



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«01» 04 2018թ.

No 06/3-1/16672-18

Ձեր No _____

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՓՈՔՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Ռ. ՄԱՇԱԴՅԱՆԻՆ

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Վ. ՍԻՍԱԿՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 15.02.2018թ.
թիվ Պ-06 գրության

Հարգելի պարոն Համբարձումյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 307-րդ
հոդվածը, իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

ՀՀ հարկային օրենսգրքի՝

- 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն՝ արտարժույթով
արտահայտված գործարքների ու գործառնությունների շրջանակներում ապրանքների
ներմուծման կամ արտահանման գործառնությունների մասով ձևավորվող հարկման բա-
զաները և ապրանքների սկզբնական արժեքները որոշվում են ԵՏՄ անդամ պետույթ-
յունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման
գործառնությունների դեպքում՝ համապատասխանաբար ապրանքի ներմուծման կամ
ապրանքի արտահանման հարկային հայտարարագրի ամսաթվի դրությամբ (անկախ
հետագայում այդ գործառնությունների մասով ապրանքի ներմուծման ճշտված հար-
կային հայտարարագիր կամ ապրանքի արտահանման ճշտված հարկային հայտարա-
րագիր ներկայացնելու հանգամանքից)՝ ելնելով այդ օրը ՀՀ կենտրոնական բանկի
հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից,

- 65-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով հարկվում է, մասնավորապես՝ ՀՀ տարածքից ԵՏՄ անդամ պետություն արտահանված՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի (բացառությամբ սև և գունավոր մետաղների ջարդոնի) մաքակարարումը՝ օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթուղթը հարկային մարմին ներկայացնելու դեպքում,

- 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ տարածքից ԵՏՄ անդամ պետություններ արտահանված՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների մատակարարման գործարքների նկատմամբ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափի կիրառությունը հիմնավորվում է արտահանման հարկային հայտարարագիրը արտահանողի կողմից հարկային մարմին ներկայացնելու օրը:

2014թ. մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի անբաժանելի մաս համարվող՝ «Ապրանքների արտահանման ու ներմուծման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձման և դրանց վճարման նկատմամբ վերահսկողության կարգի մասին» թիվ 18 հավելվածով ներկայացված արձանագրության՝

- 4-րդ կետով սահմանված են այն փաստաթղթերի ցանկը, որոնք ներկայացվում են ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափ կիրառելու և (կամ) ակցիզների վճարից ազատվելու հիմնավորումը հաստատելու համար, այն անդամ պետության հարկ վճարողի կողմից, որի տարածքից արտահանվում են ապրանքները: Միաժամանակ, սահմանված է նաև որ նույն կետով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվում հարկային մարմին, եթե ԱԱՀ-ի զրոյական տոկոսադրույք կիրառելու և (կամ) ակցիզների հարկից ազատվելու հիմնավորումը հաստատող փաստաթղթերը չներկայացնելը՝ հարկային հայտարարագրի հետ միաժամանակ, նախատեսվում է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքից արտահանվել են ապրանքները,

- 5-րդ կետի համաձայն՝ նույն արձանագրության 4-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացվում են հարկային մարմին՝ ապրանքները բեռնառաքելու (փոխանցելու) ամսաթվից 180 օրացուցային օրվա ընթացքում:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ հայտնում ենք, որ.

1) ԱԱՀ վճարող համարվող կազմակերպության կողմից ԵՏՄ անդամ պետություն ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների արտահանման մասով հարկման բազան արտացոլվում է ապրանքի մաքակարարման պահը (օրը) ներառող հաշվետու

Ժամանակաշրջանի համար ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկում,

2) ՀՀ տարածքից ԵՏՄ անդամ պետություններ արտահանված ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների մատակարարման գործարքների նկատմամբ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափի կիրառությունը հիմնավորվելու համար արտահանողի կողմից հարկային մարմին է ներկայացվում արտահանման հարկային հայտարարագիր (արտահանման օրվան հաջորդող 180 օրացուցային օրվա ընթացքում): ՀՀ տարածքից ԵՏՄ անդամ պետություններ արտահանված ապրանքների մատակարարման գործարքների մասով հարկային մարմին այլ փաստաթղթերի ներկայացման պահանջ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված չէ,

3) արտարժույթով արտահայտված գործարքների ու գործառնությունների շրջանակներում ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործառնությունների մասով ձևավորվող հարկման բազաները որոշվում են ապրանքի արտահանման հարկային հայտարարագրի ներկայացման ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից (անկախ հետագայում այդ գործառնությունների մասով ապրանքի ներմուծման ճշտված հարկային հայտարարագիր կամ ապրանքի արտահանման ճշտված հարկային հայտարարագիր ներկայացնելու հանգամանքից): Արտարժույթով արտահայտված գործարքների ու գործառնությունների շրջանակներում ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործարքի մասով ԱԱՀ-ով հարկման բազայի որոշման այլ կարգավորում սահմանված չէ,

4) ՀՀ տարածքից ԵՏՄ անդամ պետություններ արտահանված ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների մատակարարման գործարքների մասով արտահանման հարկային հայտարարագրի ներկայացման վերջնաժամկետն ավարտվելուց հետո ՀՀ հարկային օրենսգրքով ԱԱՀ-ի պարտավորության առաջադրում նախատեսված չէ:

Հարգանքով՝



Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ